

դիրներու մասին թէ հռոմէական հատուածի մասին բռնած է իրաւարար դիրք մը և կատարած է հաշտ դեր մը՝ ննարաւոր իրաւախրութեամբ ու միջին քաղաքագիտութեամբ մը, որով մեծութիւնք, արուեստք, դպրոցական, եկեղեցական, զբաղական և վանական զարգացումներ դիւրաւ կը բացած են արմատ ձգել ժամանակակից տոհմայիններուն մէջ: Կոլոտի ու Նայեանի օրերէն է՝ որ թուրքահայերուն բնիկ յառաջդիմութիւնը կը ձգէ խորունկ արմատ մը, որմէ կը բուսնին և կ'ընծիւզին ցայսօր կատարուած իմացական ու արհեստական բարգաւաճումները:

Այս միջոցներուն կը սկսի նաեւ փայլել ի Ռուսիա՝ Յովհաննէս Լազարեան ազնուականը, որ շինած է Բեդրսպուրկի մէջ երկու հայ եկեղեցիներ ու կտակած է երկու հարիւր հազար ռուպլի՝ Մոսկուայի մէջ հիմնեալ Լազարեան ճեմարանին համար:

Նոյն միջոցները կը սկսի նաեւ յիշատակուիլ Ռուսահայերուն մէջ՝ Արզութեանց երկայնաբազուկ տոհմը, որմէ էր Յովսէփ ընտրեալ կաթողիկոսն Արզութեանց և Հասան Զալալեանց հին գերդաստանը, որ յաճախ յիշատակուած ու արձանագրուած է: Այս վերջինին շառաւիղէն էր 1840էն սուրին իբրև մատենագիր ու իբր առաջնորդ Վրաստանի և Իմէրեթի փայլող Սարգիս արքեպիսկոպոսն Հասան Զալալեանց. կը գրէր յստակ ու կշռեալ գրաբառ մը:

Իսկ Պոլիսի մէջ ծաղկած ու փայլած է նոյն ատենները (1750) ամէնէն երեւելին թուրքահայոց — ակընցի Եաղուզ աղան կամ ամիրան, որ հիմէն նորոգած է Մուշի Ս. Կարապետի վանքը, որ և մայրաքաղաքի ամենագլխի ժողովուրդներէն մեծարուած էր, ու հայերուն մէջ ցայն վայր չէր տեսնուած իրեն հաւասարապատիւ մը. մարդ՝ Վազէզի պէս: Իբր իրեն ժամանակակից՝ փայլած են նաեւ ապուշեփցի Ազատեան ամիրաները, որոնց տապանաքարերը կը կենան դեռ Սկիւտարի հայերուն գերեզմանատունը, ակընցի Մոմճի Սարգիս ամիրան՝ արդի Խասգիւղի Մոմճեաններուն նախահայրը, որուն յաջորդները սերնդաբար գրասէր մարդիկ եղած են. մանաւանդ Մոմճեան Մկրտիչ աղան, որ ունի գործօն և նեղուող դեր մը 1855էն 1855: